ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 4455-Ա « 31 » հոկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի
Հ.2837-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի տեղակալի 25.09.2025թ. հ.Ն/56197-25 զեկուցագիրը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

1. Երևանի քաղաքապետի 2025 թվականի հուլիսի 17-ի «Մյասնիկյան պողոտայի հ.20 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման իրավունքով «Երևանի Կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրելու մասին» հ.2837-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) նախաբանում «վարչական շենքն» բառերը փոխարինել «գույքը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը» բառերով.

2) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող, Մյասնիկյան պողոտայի հ.20 հասցեում գտնվող գույքը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.14022023-01-0331 վկայական/ անհատույց օգտագործման իրավունքով՝ 3 /երեք/ տարի ժամկետով տրամադրել «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ին:»:

2. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևանի քաղաքապետի անունից, «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ–ի հետ կնքել համաձայնագիր՝ 01.08.2025թ. կնքված հ.13/2-ԱԳ գույքի անհատույց օգտագործման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին՝ ներառելով պայմանագրի հետևյալ փոփոխությունը.

1) պայմանագրի 1.1 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Սույն պայմանագրով Փոխատուն պարտավորվում է Փոխառուի անհատույց օգտագործմանը հանձնել Մյասնիկյան պողոտայի հ.20 հասցեի գույքը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.14022023-01-0331 վկայական), այսուհետ՝ «Գույք»:»:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ